

HORAIRE D'ÉTÉ
à partir du 10 juin 2002

Du lundi au vendredi: de 8h15 à 14h30
Samedi: de 8h15 à 12h30

البنك اللبناني الفرنسي
BANQUE LIBANO-FRANÇAISE

ՇԷՆԻ ՑԱՆԱՍԿԱԿԱՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԻՄ
ԻՐԱՅՖԷԼԵԱՆ ԵՆՈՐ ՄՐԱԳԻՐՆԵՐԷ

Շենյու Մոհամեդ Հուսէյն Ֆատախիան երկուսն էլ իր քարոզչի մէջ ըսաւ, որ այս պայմաններուն մէջ մեզի կ'ուղղուի մարտահրաւեր մը, թէ լիբանանացիք ի՞նչ պէտք կ'ընեն քաղաքական եւ ընկերային միասնութեամբ դիմագրաւել ներքին եւ արտաքին վտանգները, փոխանակ քաղաքական եւ ընտրական ցնցումներով մաշեցնելու երկրին քաղաքական եւ տնտեսական դրամագլուխէն մնացածը:

Շենյու Ֆատախիան նկատել տուաւ, որ ներքին բեւը կը խորատուրի երկիրը քաղաքական ահապահ մատնող կրքոտ բանավեճի մը մէջ, մինչ իսրայէլի սեղմ կառավարութիւնը կը քննարկէ Լիբանանի դէմ նոր ծրագիրներ:

ՄԵԹՆԻ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
ՈՒՇ ԳԻՇԵՐԻՆ ՅՐԱՊԱՐԱԿԵՑ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԸ

Երէկ գիշեր ներքին գործոց նախարարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ կատարեց յստակացումներ հիւսիսային Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն արդիւնքներուն շուրջ ծագած տարակարծութիւններուն եւ ընդդիմադիր ճակատին կողմէ կատարուած յայտարարութիւններուն գծով:

Հաղորդագրութիւնը կ'ըսէ հետեւեալը.

Ա. - Պատասխանելու համար նախորդ քանի մը օրերուն ընտրութիւններուն գծով կատարուած յայտարարութիւններուն եւ կեցուածքներուն, կարելի է յիշել, որ Երեքշաբթի, 4 Յունիսին, ներքին գործոց նախարար Էլիաս Մըր տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն մէջ յայտարարեց Քուէսիտայ Գերագոյն Յանձնախումբին իր ստացած տեղեկութիւնները, ինչպէս նաեւ յայտարարեց նշեալ նախարարութեան յայտնաբերած սխալները, (Հըմլայայէն անկախ), որուն հիմամբ Քաաքուր շրջանին մէջ քուէները երկու անգամ հաշուուած են: Այս պատճառով նախարար Մըր յաջորդ օրն իսկ հարցը փոխանցած է յանձնախումբին՝ առ ի քննարկում: Հետեւաբար յստակ է, որ ներքին գործոց նախարարութիւնը իր պարտականութիւնը կատարած է, յարգելով բոլոր մանրամասնութիւնները:

ԻՐԱՅԷԼ ՊԱՏԵՐԱԶՍ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ



Զոլիք Փաուրը և Մուպարաք

Իսրայէլեան ուժերը երէկ շարունակեցին գինւորական գործողութիւնները պաղեստինեան շրջաններուն դէմ՝ թափ տարով ճնշումներ պաղեստինեան իշխանութեան վրայ եւ յաւելեալ ձեռքարկներ կատարեցին: Մէկ օր առաջ, իսրայէլեան բանակին թնդանօթները ուժգնորոշեցին իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի Ռամալայի կեդրոնատեղին՝ աւերներ գործելով: Արաֆատ ըսաւ, որ իսրայէլի որդեգրած միջոցառումները ցոյց կու տան, որ անհիկա պատերազմ յայտարարած է խաղաղութեան դէմ: Արաֆատ կը խօսէր ՄԱԿի յատուկ պատուիրակ թերի Ռոտ Լարսընի հետ հանդիպումին աւարտին:

Իսրայէլեան բանակը Այսրյորդանանի դէմ ներխուժումի գործողութիւններու ձեռնարկած է, իբրեւ հակադարձութիւն անձնասպանական վերջին գործողութեան, որ 17 գոհ խլած էր Զորքարթի օր: Անձնասպանական գործողութիւնն ու անոր դէմ իսրայէլի որդեգրած միջոցառումները թափ տուին լարուածութեան, յատկապէս վարչապետ Արիէլ Շարոնի Ուաշինկթըն այցելութեան նախօրեակին: Վերստին թափ տալու կը սպառնայ նաեւ խաղաղարար միջազգային ճիգերուն:

Ականատեսներ յայտնեցին, որ իսրայէլացի զինուորներ՝ հրասայլերով, որ անհիկա պատերազմ յայտարարած է խաղաղութեան դէմ: Արաֆատ կը խօսէր ՄԱԿի յատուկ պատուիրակ թերի Ռոտ Լարսընի հետ հանդիպումին աւարտին:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ
ԱՒԱՐՏԵՑ ՊԻԵԼՈՌՈՒՍԻԱ
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Լուրաշենքո եւ Զոչարեան կը կատարեն Հայաստանի դեսպանատնը հիմնարկելը:

Երէկ աւարտեցաւ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի պաշտօնական այցելութիւնը Պիեղոուսիա: Նախագահին գլխաւորած պատուիրակութիւնը երէկ՝ երկրորդ եւ վերջին օրը այցելեց պիեղոուսական արդիւնաբերութեան՝ նախաքիմիական, մեքենաշինութեան, պարենային, էլեկտրոնային, առողջապահական արտադրութիւններու շարք մը հաստատութիւններ:

Հինգշաբթի օր կայացած էր Պիեղոուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքոյի հետ նախագահ Քոչարեանի հանդիպումը: Քննարկուած էին երկու երկիրներու ռազմավարական համագործակցութեան ուղիները: Նախագահներու ղոնփակ ինչպէս նաեւ ընդլայնուած կապերով բանակցութիւններուն ընթացքին հանգամանօրէն քննարկուած էին Հայաստանի եւ Պիեղոուսիոյ միջեւ առեւտրատնտեսական յարաբերութիւններու վարգացման բնագաւառները:

Սոյն օրը նախագահ Քոչարեան նաեւ հանդիպում ունեցած էր Պիեղոուսիոյ վարչապետ Վլատիմիր Տրաժիւնի հետ: Տրաժիւնի նշած էր, որ երկու երկիրներու կապերը կը թելադրուին վարգացման նոր փուլ: Իր կարգին, նախագահ Քոչարեան ընդգծած էր երկու երկիրներու ղեկավարներուն միջեւ հանդիպումները աւելի յաճախակի դարձնելու անհրաժեշտութիւնը:

Յունիս ծին նախագահներ Քոչարեան եւ Լուրաշենքո մասնակցած էին Պիեղոուսիոյ մէջ Հայաստանի դեսպանատնի հիմնարկման հիմնարկէքին: Լուրաշենքո այս առիթով յայտնած էր, թէ Հայաստանի դեսպանատնը պիտի դառնայ ոչ միայն հայկական դիւանագիտական ներկայացուցչութեան նստավայր, այլ՝ երկու ժողովուրդներու ամրապնդող գործընկերութեան եւ անխախտ բարեկամութեան խորհրդանիշ: Իր կարգին, նախագահ Քոչարեան դեսպանութեան հաստատումը ցուցանիշ համարած էր վերջին շրջանին երկու երկիրներու գործակցութեան վարգացման եւ որակաւորման:

ՄԵԹՆԻ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔԻՆ
ՀԻՄԱՍԲ ՄԻՐՆԱ ՄԸՐԷ Է ՅԱՂԹԱԿԱՆԸ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ԷԼԻԱՍ ՄԸՐ՝ «ՆԱՀԱՐ» ՕՐԱԹԵՐԹԻՆ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երէկ «Նահար» օրաթերթին մէջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ յայտնեց, որ կ'ընթանայ իր հրաժարականը ներկայացնելու ուղղութեամբ, ո՛չ նախարարութեան կեդրոնատեղի կ'երթայ, ոչ ալ նախարարաց խորհուրդի ժողովին, «եւ եթէ կ'ուզեն, կրնան պաշտօնազրկել կ'ընեն»:

«Եթէ վարչապետ Ռաֆիք Հարիրի դատաւորի մը չհեռաձայնէր եւ անոր վրայ ճնշում չբանեցնէր, Միւրնա Մըր 14 քուէի տարբերութեամբ յաղթական պիտի ըլլար. այս ճնշումին պատճառով ես քալլ մը արդի ժողովուրդային լարուածութիւնը մեղմացնելու համար, որպէսզի քրիստոնէական երիտասարդները չվճարեն պատահածին գինը», ըսաւ ան:

ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՌՈՒՍԻԱ - ԱԶՐՊԷՅՃԱՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ՝ ՎԱՂԸ

Ռուսիա եւ Արաբիան կիրակի օր Կասպիցի բաժանման մասին երկկողմանի համաձայնագիր մը պիտի ստորագրեն: Սուալ քան ամիս մը առաջ Ռուսիա նոյնանուն համաձայնագիր մը ստորագրած էր Ղաչախտանի հետ: Ռուս-արաբական համաձայնագիրը կը յաջորդէ անցեալ Ապրիլին Կասպիցի բաժանման վերաբերեալ կայն ելեւորող հինգ երկիրներու՝ Ռուսիոյ, Արաբիանի, Ղաչախտանի, Թուրքմենիստանի եւ Իրանի միջեւ ձախող բանակցութիւններուն:

Փորձագէտներ կ'ըսեն, թէ երկկողմանի նոր համաձայնութիւնը աւելի էւս պիտի մեկուսացնէ Իրանը եւ Թուրքմենիստանը, որոնք կրնան Կասպիցի ծովու բաժանման վերաբերեալ իրենց դիրքորոշումները մեղմացնելու հարկադրանքին տակ գտնուիլ:

«Ռուս-արաբական համաձայնագիրը տրամաբանական շարունակութիւնն է մեր երկկողմանի գործակցութեան եւ կարելի իրադարձութիւն մը՝ Կասպեան շրջանին համար», ըսաւ Արաբիանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիբե: Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի մասնակցութեամբ համաձայնագրի ստորագրութեան համար Ս. Փետրոսպոլի պիտի մեկնի Արաբիանի նախագահ Հայտար Ալիբե:

Անցեալ Ապրիլին երբ Կասպիցի բաժանման համար ընդհանուր համաձայնագիր մը հասնելու ճիգերը ձախող էին, Վլատիմիր Փութին յայտարարած էր, թէ Մոսկուա նկատի պիտի առնէ երկկողմանի համաձայնութիւններ կնքելու ընտանքը: Աւելի ուշ ան համաձայնագիր մը ստորագրած էր Ղաչախտանի նախագահ Սուրապիտանի Նապարպաւի հետ, քարիդի եւ կապի հանքերու միացեալ պեղումի վերաբերեալ:

ՔԱՐՏԻՂԻ ՄԻՋԱԿԱՅԻՆ «ԷՔՍՆՈՒՄՈՒՄԻ»

Քարճագէտներ կ'ըսեն, թէ Կասպիցի արաբական համաձայնագիրը կնքելու ընտանքը: Աւելի ուշ ան համաձայնագիր մը ստորագրած էր Ղաչախտանի նախագահ Սուրապիտանի Նապարպաւի հետ, քարիդի եւ կապի հանքերու միացեալ պեղումի վերաբերեալ:

Ռուս քարճագէտներ Վլատիմիր Փութինը մը յայտնեց, որ Արաբիանի հետ համաձայնագրի մը ստորագրումը չի նշանակեր, որ Ռուսիա այլեւս չհետաքրքրուի Կասպիցի ծով վերջնական համաձայնագրի մը կայացմամբ:

Քարճագէտներ կ'ըսեն, թէ Կասպիցի արաբական համաձայնագիրը կնքելու ընտանքը: Աւելի ուշ ան համաձայնագիր մը ստորագրած էր Ղաչախտանի նախագահ Սուրապիտանի Նապարպաւի հետ, քարիդի եւ կապի հանքերու միացեալ պեղումի վերաբերեալ:

ՕՐԵՆՔԸ ՊԵՏՔ Է ԿԻՐԱՐԿՈՒԹԻ ԲՈԼՈՐԻՆ ՆԿԱՏՍԱՍԲ

Երէկ երեկոյեան, Չալքայի մէջ, նախկին փոխ վարչապետ եւ ներքին գործոց նախարար Երեսփոխան Միշէլ Մըր կատարեց յայտարարութիւն մը, ներկայութեամբ նախարարներու, երեսփոխաններու, պետական եւ կուսակցական անձնակազմի թիւերու եւ իրեն համակիր բազմութեան մը:

Միշէլ Մըր խօսքը ուղղելով Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրութեան թեկնածու Միւրնա Մըրի գորակիցներուն ու քուէարկողներուն, ըսաւ.

«Երկրին մէջ մթնոլորտ մը կայ, որ կարծէք, թէ Կասպիցի Մըր եւ ընդդիմադիր ճակատը տարած են վերջնական յաղթանակը եւ դուրս կարծէք պարտուած «վերջացած էք»: Այն բոլորը, որոնք գորակցեցան Կասպիցի Մըրի, պարզապէս գորակցեցան պատկերաս-

փուռի պատասառի մը եւ իրենց ձայնը տուին ոչ թէ թեկնածուին, այլ՝ տուեալ պատասառին»:

Միշէլ Մըր ըսաւ նաեւ, թէ իսկական յաղթանակը Միւրնա Մըրն է եւ պէտք է գիտնաք այս իրողութիւնը, ինչպէս նաեւ լաւ գիտնաք, որ դուրս կը ներկայացընէք Մեթնի ժողովուրդին կէսը:

Միշէլ Մըր ըսաւ, որ օրէնքը պէտք է յարգուի բոլորին կողմէ, ինչպէս նաեւ կիրարկուի բոլորին նկատմամբ հաւասարապէս, իսկ բոլոր պէտք է նախանձանդիր մնանք երկրին ու ժողովուրդին խաղաղութեան ու անդորրութեան նկատմամբ:

Վերջապէս, Միշէլ Մըր պահանջեց, որ իշխանութիւնները վերջնականապէս յստակացնեն յաղթանակին ճակատագիրը եւ կատարեն պաշտօնական յայտարարութիւն:

ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓԱՌԻ
(Կաթողիկոս Մեծի Տանը Կիլիկիոյ)

Նախագահութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԻՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

Կազմակերպութեամբ՝
Հ. Մ. Ը. Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ վաղը՝ Կիրակի, 9 Յունիս 2002ի երեկոյեան ժամը 6:00Ը սկսեալ, Պուրճ Համուտի Զաղաքապետարանի դաշտին վրայ:

ԵԹԷ ՀՐԱԺԱՐԵԼՈՒ ՀԱՐՑ ԿԱՅ, ԱՊՈ ՊԵՏՔ Է ԱՍԲՈՂՁ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԱԺԱՐԻ

Կ'ԸՍԵ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ԽԱԶԷՆ

Երեսփոխան Ֆարախ Նազկն երկվ դիտել տուաւ, որ եթէ հրաժարական պիտի ներկայացուի, ապա անհիկա պէտք է ըլլայ ամբողջ կառավարութեան հրաժարականը՝ ի խնդիր ազգային շահին, որովհետեւ կառավարութիւնն է պատճառը տագնապներուն, որոնց լուծման համար բաւարար չէ այս կամ այն նախարարին հրաժարումը, այլ կը վատթարացնէ ներսին փոստ կառավարութեան ստեղծած տագնապները: «Ներքին գործոց նախարար Էլիաս Մըրի հրաժարականը չենք պահանջեր, այլ կը պահանջենք, որ ան պաշտօնապէս յայտարարէ իր մամուլը ստույգի մէջ հաստատուած եւ նախարարաց խորհուրդին ու հանրապետութեան նախագահին որդեգրած արդիւնքը՝ կապրիէլ Մըրի յաղթանակը, շրջանցելու համար ազգային տագնապ մը», ըսաւ Երեսփոխան Նազկն:

ԻՆԻ ՀԸՊԵՅՔԱՅԻ ԿԻՆԸ՝ «ՈՒԱՍ»-Ի ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

Նախկին նախարար Էլիաս Հրայէրայի սպանութենէն ետք, նախապէս իր կողմէ դեկլարուած «Ուատ» կուսակցութիւնը երկվ իր կեդրոնին մէջ կայացուց նիստ մը, որուն ընթացքին որոշեց կուսակցութեան նոր նախագահը՝ յանձնի ժինա Էլիաս Հրայէրայի:

ՄԵԹՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԳԾՈՎ ՆԱԽԱՐԱՐ ՑԱՐԱՆ ԿԸ ԴՐՈՒՍԷ ԵՐԿՐԻՆ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԵՅՈՒԱԾՔԸ

Խորհրդարանի հարցերու պետական նախարար Միշէլ Ֆարախ յայտարարեց, որ հիւսիսային Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրութիւններու ստեղծած տագնապին նկատմամբ բարձր գիտակցութեամբ մտեցումը առիթ չտուաւ երկրին մէջ ազգային տագնապի ստեղծումին: Ան արժեւորեց երկրի ղեկավարութեան կարողութիւնը՝ առողջ ձեռքով եւ թափանցիկութեամբ շրջանցելու ընտրութիւնները եւ կոչ ուղղեց բոլոր շարժումներուն եւ կուսակցութիւններուն՝ գիտակցութեամբ վարուիլ, որպէսզի երկիրը մնայ կայուն, «որովհետեւ արդէն Լիբանան գնազան մակարդակներու վրայ կը գտնուի զգալուն վիճակի մէջ»:

Ֆարախ այս խօսքը արտասանեց Էլքեմիէի «Մոնո» փողոցին մէջ կենտրոնի Միջազգային Օրուան առիթով կատարուած տօնակատարութեան ընթացքին: Ներկայ էին կենտրոնի նախարար Միշէլ Մուսա, Երեսփոխան Աթէֆ Մատաւանի, Պէյրութի նահանգապետ Եմիլիոյ Սարրաֆ, ինչպէս նաեւ պատասխանատու պաշտօնատարներ:

ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՆԵՍԻՊ ԼԱՇՈՒՏ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՇՈՒՏԻ

Հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երկվ Պատուաւոր նախագահական պալատին մէջ ընդունեց երեսփոխան Նեսիպ Լահուտի այցելութիւնը: Հանդիպումը տեւեց մէկուկէս ժամ եւ անոր աւարտին յայտարարութիւններ չկատարուեցան:



Նախագահական պալատի լրատու գրասենեակը հաղորդեց, որ հանդիպումին քննարկուած են ընդհանուր հարցեր եւ քաղաքական ներքին վարձագումները, մասնաւոր ինչ կը վերաբերի հիւսիսային Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն ընթացքին եւ անոնցմէ ետք յայտարարուած կեցուածքներն ու հակադեցութիւնները:

Այս ծիրէն ներս նախագահ Լահուտ վերահաստատեց, որ իր կեցուածքը անփոփոխ է եւ նոյնն է ընտրութիւններէն առաջ, անոնց ընթացքին եւ անոնցմէ ետք. այդ կեցուածքը կ'առաջադրէ հիմնուիլ միայն ընտրութիւններու ընթացքին եւ մանրամասնութիւններուն վերաբերող օրէնքի տրամադրութիւններուն վրայ. այս կեցուածքը անփոփոխ պիտի մնայ, որովհետեւ անոր միակ չափանիշը օրէնքն է, ըսաւ ան:

Հանդիպումին ընթացքին նաեւ քննարկուեցան երկրին ընդհանուր քաղաքական վիճակը եւ ապագայի հեռանկարները, մասնաւոր իր այս պայմաններուն մէջ հրամայական է ներքին միացեալ կեցուածքով հարեւնիքի գերագոյն շահերու գերադասումը. որպէսզի կարելի ըլլայ դիմագրուել նախատեսուած մարտահրաւերները եւ պահպանել բազմաթիւ բնագաւառներէ ներս կատարուած իրագործումները, որոնց շնորհիւ Լիբանան վերստին դերատեսչական դարձաւ շրջանային եւ միջազգային բեմերու վրայ, յայտնեց նախագահական պալատի հաղորդագրութիւնը:

Նախագահ Լահուտ եւ երեսփոխան Ն. Լահուտ նաեւ խօսեցան երկրի տնտեսական վիճակին եւ քաղաքացիներու առօրեային ու պետական վարչութիւններու վրայ անոր անդրադարձներուն մասին:

ԲՈԼՈՐ ԱՐԱՔՆԵՐԸ ՊԱՐՏԱԻՈՐ ԵՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ԸՆՏՐԱՆՔԸ

Կ'ԸՍԵ ՇԵՅՆ ՆԱՍՐԱԼԼԱ

Հրպայլալի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալլա երկվ անդրադարձաւ Լիբանանի մասին իրայելեան այն յայտարարութիւններուն, որոնց համաձայն իբրեւ թէ անոնք կը նախատեսեն, որ Հրպայլալ «մեծ գործողութիւններ» կատարէ Երազիլի դէմ:

Մեր երկրին մէջ մասին բռնագրաւուած վիճակը մեզի իրաւունք կու տայ, որ դիմադրութեան եւ պատագրական պայքարի ծիրէն ներս քայլեր առնենք որեւէ ատեն եւ որեւէ առիթով, իսկ իրայելացիք անկախող են նախօրոք իմանալու կամ գուշակելու. թէ ե՞րբ պիտի գործենք», ըսաւ ան:

Շէյխ Նասրալլա ըսաւ, որ բոլոր արարներն ու իսլամները պարտաւոր են պաշտպանելու անձնասպանական գործողութիւններ կատարելու դէմ:

«Մեր երկրին մէջ մասին բռնագրաւուած վիճակը մեզի իրաւունք կու տայ, որ դիմադրութեան եւ պատագրական պայքարի ծիրէն ներս քայլեր առնենք որեւէ ատեն եւ որեւէ առիթով, իսկ իրայելացիք անկախող են նախօրոք իմանալու կամ գուշակելու. թէ ե՞րբ պիտի գործենք», ըսաւ ան:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ **ՎԱՆԱՅ ԶԱՅՆ**

Այսօր՝ Շաբաթ, 8 Յունիս, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, կրնաք լսել մեր հարցալրոյցը Համազգայինի «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբի խմբավար՝

ԶԱԶԱՐ ԲԷՇԻՇԵԱՆԻ ՂԵՏ
(Հարցալրոյցին կրկնութիւնը՝ կէսօրէ ետք ժամը 4:00ին):

ԿՈՒՉՈՒԻ

• Կատարութիւն մը Պուրճ Լամուտի մէջ կարիք ունի հաշուապահուիկի մը: Դիմել հեռ. 03-273418:

ՇԻՐԱԿ ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆԵՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

վաստակաւոր բառարանագիր ՄԵՍՐՈՂ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

ԱՆԳԼԵՐԵՆ – ՀԱՅԵՐԵՆ
ՀԱՅԵՐԵՆ – ԱՆԳԼԵՐԵՆ

ԳՐՊԱՆԻ ՄԻՍՅԵԱԼ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆԸ

Այժմէականացուց՝ ԼԵԻՈՆ ԹՈՐՈՍԵԱՆ

- Անգլերէնի մէջ գործածական համառոտագրութիւններով (Customary abbreviations)
- Նորօրեայ 1700 բառերու լաւագոյնով
- Անգլերէն բառերու հնչումներով
- 720 էջ. փոյգ սիւնակ Գին՝ \$ 20

ՇԻՐԱԿ ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆ
Harboyan Center, Bloc C - Tel. 01/ 253008 Fax 01/ 253009
E-mail: chirak@dm.net.lb

Հ.Բ.Բ.Մ. - ՄԵԼԿՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ - ԿԻՊՐՈՍ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Կայոց լեզուի եւ գրականութեան, ինչպէս նաեւ հայոց պատմութեան, վկայեալ եւ փորձառու ուսուցիչներու կարիքը կայ: Ընդամենը անհատական ուսում հայագիտութեան մէջ եւ ուսուցչական ասպարեզի մէջ փորձառութեամբ նախապայման եմ: Մանկավարժութեան վկայական եւ անգլերէն լեզուի գիտութիւնը խիստ փայլաբեկի է:

Կայտ. -
E-mail - agbumel@melkonian.ac.cy
Fax - 00 - 357 - 22 - 493155
Tel. - 00 - 357 - 22 - 422195

HAMAZKAYIN FORUM 2002

ՏՐԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԵԿՎՈՒԹԱՅԻՆ ԸՆԴԱՐ ԸՆՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

ՊԱՏՐԱՎՍ ԷՔ ԱՄՍՈՒՄԱՆ ԱՐՁԱԿՈՒԳԻ ԶԵՐ ԾՐԱԳԻՐԸ ՄՇԱԿԵԼՈՒ

Մասնակցեցե՛ք Համազգայինի ուսանողական մշակութային հաւաքին՝ երկու շաբաթ տեւողութեամբ

ՅՈՒՆԻՍ 13 - ՅՈՒՆԻՍ 27՝ ԸՆՅԱՍՏԱՆ

Այս հաւաքը առիթը պիտի ընծայէ՝

- Օսմոսանալու հայ մշակոյթի պատմութեան եւ արձանագրութեան:
- Հանդիպելու սփիւռքահայ թէ հայրենի երիտասարդ ուսանողներու:
- Մասնակցելու այժմեական նիւթեր արծարծող դասախօսութիւններու, մատուցուած՝ ծանօթ հայ մտաւորականներու եւ մասնագէտներու կողմէ:
- Զրուցելու եւ միտքեր փոխանակելու հայ երիտասարդութիւնը հետաքրքրող բազմաթիւ հարցերու մասին:
- Այցելելու հայկական պատմական կեդրոններ, ինչպէս՝ Բազմաբաններ, Եկեղեցիներ եւ տեսարժան վայրեր:
- Վայելելու տեղւոյն մշակութային, երաժշտական թէ բարձրակարգ կեանքը:
- Կազմակերպելու մասնակցողներուն իսկ կողմէ՝ եզրափակիչ անձնագրի հանդէս - հաւաքոյթ մը, վերապրելու միասին անցուցած յիշատակելի երկու շաբաթները հայրենի հողին վրայ:

Մանրամասնութիւններու համար կրնաք դիմել Համազգայինի Կեդրոնական Վարչութեան Գրասենեակ, Նշան Փալանճեան Ծեմարան, հեռաձայն՝ 01-372455 կամ 03-549917, ամէն օր, առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կէսօրը ետք ժամը 4:00 եւ կամ այցելել մեր կայքէջը՝ www.hamazkayin.com

Մասնակցութեան տարիք՝ 17էն 26 տարեկան:

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԸԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ - ԶՐՈՅՑ

ՀԱՅ ԴԱՏԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Դասախօս՝ ԴՈԿՏ. ԱՐԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ
(Հ. Յ. Դ. Ֆրանսայի Հայ Դատի Յանձնախումբի երկար տարիներու անդամ եւ ատենապետ)

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 10 Յունիս 2002, Երեկոյեան ժամը 8:00ին, Հայկազեան համալսարանի սրահին մէջ:

ՀՐԱԻՐ

ՊԱՍԼՊԵՔԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱԻ ՀԱՅԵՋ ԱՍՍԻ Բ. ՏԱՐԵԼԻՑԸ

Պատա կուսակցութեան կայմակերպութեամբ երկվ Պատկապի մէջ տեղի ունեցաւ սգաւոն՝ Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասադի մահուան երկրորդ տարեկիցին առիթով:

Ներկայ էին պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաուի, կրթութեան նախարար Ալի Ապտալլա, երեսփոխաններ Ղապի Չապթը, Նատր Սուրբար, Իպրահիմ Պայան, Մատուտ Այ Հուժէյրի, շէյխ Մոհամէտ Եպպալէ, ինչպէս նաեւ պահպան կուսակցութիւններու ներկայացուցիչներ, քաղաքապետեր, թաղապետեր եւ կրօնական, պիւնտրական ու ազգային դէմքեր:

Նախարար Մրատ իր խօսքին մէջ հաւաստեց, որ նախագահ Ասադ միշտ ալ առիթ տուած է խաղաղութեան կերտումին եւ երբեք հաշտ աչքով չէ դիտած անոնք, որոնք փորձած են թշնամիին հետ բարեկամանալ:

Իր կարգին, նախարար Հըրաուի շեջտեց, որ Հաֆէզ Ասադի կեցուածքներն ու հարցերու ուղղամիտ մօտեցումը միշտ ալ փաստուած է անցեալի փորձառութիւններէն մեկնած:

Ալի Ապտալլա վեր առնելով Հաֆէզ Ասադի դեկլարացիան դերը անդրադարձաւ շրջանի պարպած ներկայ իրավիճակին եւ ընդգծեց, որ Կապալի, Այսրիոյ դանախի եւ ամբողջ Պաղեստինի մէջ Խորայէլի գործած բռնարարքները պատրաստութեան ծրագիրներ են Լիբանանը եւ Սուրիան թիրախ ունեցող նորանոր յարձակումներու:

ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Յառաջիկայ Կիրակի, 9 Յունիսին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի մատուցուի հանդիպար Սուրբ եւ անմահ պատարագ: Յընթաց Ս. պատարագի, հայրապետական մաղթանք պիտի կատարուի Ս. Արոտոյ վեհափառ հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ընտրութեան եւ օծման 7րդ տարեդարձին առիթով:

Պիտի պատարագէ
ԳԵՐՇ. Տ. ՕՇԱԿԱՆ ԱՐԸ. ԶՈԼՈՅԵԱՆ

Հանդիսապետութեամբ՝
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Սուրբ պատարագին ներկայ պիտի ըլլան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան բոլոր միաբանները, թեմակալ առաջնորդները եւ Ազգային Ընդհանուր Ժողովի պատգամաւորները:

Պատարագէն ետք, վեհափառ հայրապետը շնորհաւորութիւններ պիտի ընդունի վեհարանի դահլիճին մէջ:

Սիրով կը հրաւիրենք մեր ժողովուրդի պահպանները՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին, իրենց ներկայութեամբ յարգանք արտայայտելու վեհափառ հայրապետին եւ պատուելու մեր Ս. Արոտի հիւրերը:

ԴԻՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի Հայոց Ազգային առաջնորդարանը, այսու կը յայտարարէ, թէ Պուրճ Լամուտի Ազգային գերեզմանատան մէջ ձեռնարկուած արդիական ոճով դարակ - դամբարաններու շինարարական աշխատանքը արդէն իսկ իր լրումին հասած է:

Ընտելաբար, այսու կոչ կ'ուղղենք բոլոր այն ազգայիններուն, որոնք.

1. Նախօրոք սեփական դարակ - դամբարան ունենալու իրենց նիւթական պարտաւորութիւնները կատարած են, պարտին հանդիպիլ Ազգային առաջնորդարան, ամէն օր կէսօրէ առաջ ժամը 9:00էն 1:00, դարակ - դամբարանի «գործածութեան իրաւունքի հաստատագիր» ձեռք ձգելու համար:
2. Դարակ - դամբարանի «գործածութեան իրաւունքի հաստատագիր» ձեռք բերումէն ետք միայն, ազգայինները կ'որոշուի պիտի ըլլան իրենց հարազատներուն աճիւններու փոխադրութեան հարցով զբաղիլ, ինչպէս նաեւ իրենց նոր հանգուցեալ պարագաները թաղել:
3. Սահմանափակ թիւով դարակ - դամբարաններ կը մնան, որոնց իւրաքանչիւրին սակը 1500 ամ. տոլար է:

ԴԻՄԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ» ԿԵՐՊՈՐԱՏԻՍԻ ԱԿՏԻՎԵՍԻԱ

2001 - 2002 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ - ԸՆԴԱՔԱԿԱՆ ՑՈՒՑԱՇԱՆԴԵՍ

Ցուցահանդէսի բացումը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 14 Յունիս 2002, Երեկոյեան ժամը 6:00ին, Համազգայինի Ն. Փալանճեան Ծեմարանի «Վասպուրական» սրահին մէջ, Չորեք էլ Պլաթ:

Ցուցահանդէսը բաց է մինչեւ Շաբաթ, 15 Յունիս 2002, կէսօրը ետք ժամը 4:00էն 7:00:

ՀՐԱԻՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԹՈՐՈՍ ԱՌԱՍԻՆ» ԱՎԱԴԵՄԻԱ

ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆՔՆԵՐ



Մրցանակակիր աշակերտները

Դպրոցներում մեջ արուեստի եւ լատկապէս նկար-
նութեան ուսուցման կարեւորութիւնը ընդգծելու եւ
քաջալերելու համար արուեստագէտի հիմնումներ
ունեցող աշակերտները, Համազգայինի «Թորոս Առա-
քի» Կերպարուեստի Ակադեմիան տարեկան դրու-
թեամբ կը կազմակերպէ միջդպրոցական գծագրու-
թեան մրցանքներ, որոնց վերջինը անցնող շաբաթ-
ներուն ընթացքին տեղի ունեցաւ «Թորոս Առաքի»
Ակադեմիայի նոր կեդրոնին մէջ: Մրցանքը ունէր
տարիքային երեք բաժանումներ եւ համապատաս-
խան թեմաներ:

Երէկ, Ուրբաթ, 7 Յունիսի երեկոյեան ժամը 6:00ին.
Համազգայինի Նշան Փայանձեան ձեւարարի «Վաս-
պուրական» սրահին մէջ տեղի ունեցաւ այս մրցան-
քի մասնակցող 123 աշակերտներուն գծագրութիւն-
ներուն ցուցահանդէսին բացումը, որուն ընթացքին
կատարուեցաւ նաեւ մրցանակաբաշխութիւն:
Մրցանքին հովանաւորութիւնը ստանձնած էր «Սի-
թի Սթէյշընըրի» հաստատութիւնը:
Ցուցահանդէսին մասնակցեցան հետեւեալ
դպրոցները.

Հայ Աւետ. Կեդր. Բարձրագոյն վրձ., Հայ Կաթողի-
կէ Մեարոպեան վրձ., Թոշնոց Բոյն, Հայ Աւետ. Թորոս-
եան վրձ., Լ. Նապարեան վրձ., Ազգ. Ս. Խանամիրեան
վրձ., Սրբուհի Ազնես վրձ., Ազգ. Ս. Քառասնից Ման-
կանց վրձ., Ազգ. Գ. Չաթալապաշեան վրձ., Հայ Կաթո-
ղիկէ Գեորգ Հարպոյեան վրձ., Հայ Աւետ. Երկր. վրձ.,
Հ. Ա. Ս. Դ. Կարմիրեան վրձ., Ազգ. Ե. Մանուկեան
քոլէճ, Հայ Աւետ. քոլէճ, Վ. Թեքեան վրձ., Համազգայ-
ինի Մ. եւ Հ. Արայանեան ձեւարար, Ազգ. Աքսոր Գա-
սարճեան վրձ., Ազգ. Արգարեան վրձ., Սահակեան-Լ.
Մկրտիչեան վրձ. եւ ԲԱՀԼ:

Հանդիսութեան բացման խօսքը կատարեց «Թորոս
Առաքի» Կերպարուեստի Ակադեմիայի վարիչ մար-
մին Կարեն Կարամանուկեանը, որ խոսքի ընթացքին
նշեց, որ այս մրցանակը կը նպաստէ արուեստի տար-
բեր մարմարներուն միջոցով զարգացնելու արուես-
տը: Ան վերահաստատեց գեղեցիկը, լաւը,
արուեստը եւ մասնաւոր հայ արուեստը տարածելու
Համազգայինի առաքելութիւնը:
Այս յայտարարուեցաւ մրցանակակիրներուն
անունները, որոնց վկայագիրներն ու նութիւնները
անձնեցին «Սիթի Սթէյշընըրի» հաստատութեան
նոյր եւ տնօրէն Յակոբ Արայանեան, Շաբէ Բարմա-
քարեան եւ Մարտիկ Տեմիրճեան: Մրցանքի արժա-
ւացան հետեւեալ աշակերտները.

Գ. Խումբ (13էն 16 տարեկան պարմանիներ)
Առաջին՝ Փօլ Պետրոսեան (Սահակեան Լ. -
Մկրտիչեան վրձ.) եւ Անթուան Մոսճեան (Հայ Կաթո-
ղիկէ Հարպոյեան վրձ.):
Երկրորդ՝ Աղամ Տէկիբեկեան (Թոշնոց Բոյն):
Երրորդ՝ Լիսա Աթմաճեան (Երկրէ Մանուկեան քո-
լէճ):

Գնահատանք՝ Լարա Կոտայպեան (Սահակեան
Լ. - Մկրտիչեան վրձ.), Մաթիոս Տեմիրճեան (Հայ
Աւետ. քոլէճ քաղաք), Մարին Արիկեան (Սրբուհի Ազ-
նես վրձ.), Արին Չեֆիճեան (Երկրէ Մանուկեան քոլէճ):
Բ. Խումբ (9էն 12 տարեկան պարմանիներ)
Առաջին՝ Երուանդ Էճիտեան (Հայ Կաթողիկէ Մե-
արոպեան վրձ.):
Երկրորդ՝ Մանուկ Թորոսեան (Ազգ. Աքսոր Գա-
սարճեան վրձ.) եւ Մկրտիչ Մալֆախեան (Վահան Թե-
քեան միջ. վրձ.):
Երրորդ՝ Եղիա Թաշճեան (Չաթալապաշեան - Թոր-
ոսեան վրձ.):

Գնահատանք՝ Նարինէ Կարապետեան (Հայ Կա-
թողիկէ Մեարոպեան վրձ.), Փօլին Չաքարեան (Հայ
Աւետ. Կեդր. վրձ. (Էրեքիէ)), Մարի Կիրոյեան (Ազգ. Ար-
արեան վրձ.):
Ա. Խումբ (5էն 8 տարեկան մանուկներ)
Առաջին՝ Սարհատ Գեթեմանեան (Մ. եւ Հ. Արա-
յանեան ձեւարար):
Երկրորդ՝ Արիկ Տէկիբեկեան (Ազգ. Աքսոր Գա-
սարճեան վրձ.) եւ Ղեւոնդ Եագուպեան (Հայ Աւետ.
րկր. վրձ. - Շամլեան):
Երրորդ՝ Մարիա Քիրոյեան (Հայ Աւետ. Կեդր. վրձ.
Չեֆիէ):

Գնահատանք՝ Պետիկ Հոյիքեան (Ազգ. Աքսոր Գա-
սարճեան վրձ.) եւ Ալին Կիրոյեան (Կարմիրեան վրձ.):
ԲԱՀԼէն Մարիա Ճապարայեան:
Նշենք, որ Փօլ Պետրոսեան եւ Անթուան Մոսճեան
աւել արժանացան անգլիական «Սերթիֆիքէյթ ասֆ
Երթի» յատուկ մրցանակին՝ արամադրուած «Ուրի-
նը Էստ Նիւթրըն» ընկերութեան կողմէ:
Ցուցահանդէսը կը շարունակուի նաեւ այսօր:

«ԿՈՍԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԻ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ


ՀԱՅ ԵՐԱժՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐԳ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱԿԱՆՔԻ ՇՐՋԱՓԱԿԻՆ ՄԷՋ

Ի պատիւ Ազգային
Ընդհանուր ժողովի ան-
դամներուն եւ բարձր հո-
վանաւորութեամբ ու
ներկայութեամբ Մեծի
Տանն Կիլիկիոյ Արամ Ա.
Կաթողիկոսին, երէկ՝
Ուրբաթ, 7 Յունիսի երե-
կոյեան ժամը 8:30ին, կա-
թողիկոսարանի շրջա-
փակին մէջ Համազգայի-
նի Այնճարի Պարոյր Սե-
ւակ մասնաճիւղի «Կոմի-
տաս» երգչախումբի կա-
տարողութեամբ տեղի
ունեցաւ հայ երաժշտու-
թեան համերգ:

Հանդիսութեան բաց-
ման խօսքը արտասանեց
Մեղրիկ Մ. Վրդ. Բարեք-
եան, որ Արամ Ա. կաթո-



ղիկոսին կողմէ ողջունեց
ներկաները: Ան «Կոմի-
տաս» երգչախումբը ներ-
կայացնելով ըսաւ, թէ
հայ երգի ու մշակոյթը
սիրող այդ խումբը մը երի-



տասարդները ամէն տե-
սակի դժուարութիւն
յաղթահարելով կը շա-
րունակեն իրենց երթը՝

ղէպի երգաբ-
լետի փայլուն եւ
յուշաշող հորի-
զոնները: Ան շնոր-
հակալութիւն
յայտնեց բոլոր
անոնց, որոնք նե-
ցուկ կանգնեցան
«Կոմիտաս» երգ-
չախումբին եւ
օժանդակեցին
հայ երգի ու
երաժշտութեան
պահպանման
տարածման:

Ղեկավարու-
թեամբ խմբավար
Պարզեւ Թաս-
լագեանի, «Կոմի-
տաս» երաժշտա-
կան բարձր մա-
կարդակով եւ ուրոյն ու
տպաւորիչ ձեւով ներկա-
յացուց «Ազգային Օրի-
նեթ», «Հայրենեաց սի-
րով», «Շուշույ», «Նեճնի-
նայ», «Կամեթ», «Ձիւն

ե գալիս», «Նանոր», «Օ
Salutaris Hostia», «Ռեժե
Լըպեճ», «Ավէ Մարիա»,
«Բամբ Բորոտան»,
«Շնորհեա Մեզ Տեր»,
«Շորոր» եւ «Կիլիկիա»
երգերն ու օրհներգները:
Այս երաժշտութեան
համերգին ընթացքին
«Կոմիտաս»ի անդամնե-
րուն ներկայացուցած
երգերուն ընդմէջէն ներ-
կանները պարեցան հայ
երաժշտութեամբ, եւ հայ
երգը իրենց սկանչներով
ունկնդրելու կողքին,
զայն զգացին իրենց
սրտերուն եւ հոգիներուն
մէջ:

Համերգի աւարտին,
Արամ Ա. կաթողիկոս
երգչախումբին զեղար-
կեստական ղեկավարին՝
Պարզեւ Թասլագեանին
յանձնեց յուշանուէր մը՝
հայ երաժշտութեան զար-
գացման ու հայ թէ օտար
բեմերէն հայ երգի տար-
ածման մէջ իր բերած
նպաստին համար: 1 1 1 1

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Մեթոի երեսփոխանական մասնակի ընտրու-
թիւնները, անոնց ընթացքը, սուր ընտրապայքա-
րը, ընտրութիւններու արդիւնքներուն շուրջ անո-
րոշութիւնը, կապրիէլ Մըրի յաղթանակը եւ ասոնց
անհշուտը այլ հարցեր տակաւին կը շարունակեն
կազմել տեղական մամուլի գլխաւոր նիւթերը:

Երէկուան թիով «Սաֆիր» օրաթերթը կը գրէր.
«Կապրիէլ Մըրի երեսփոխան դառնալը ակաւի կը
մնայ՝ սպասելով Քուէսիոյ Գերագոյն Յանձնախում-
բին կատարելիք յայտարարութեան. Վոր. Աուն կարծի
նով կը խօսի եւ ժամկալաբար կ'ամբաստանէ ընդդիմու-
թեան ուժի խափանման փորձերու յանցանքով»:

«Նախար» կը նշէր. «Նախարարաց խորհուրդը
նախագահ Վոր. Լախուտի խօսքէն ետք կ'որոշէ, որ
Քուէսիոյ Գերագոյն Յանձնախումբը ճշդէն ընտ-
րութիւններու վերջնական արդիւնքը: Վարչապետ
Հարիբին կրկին անբաստանելով իր ապօրինի մի-
ջամտութիւններուն անշուքեամբ՝ ներքին գործոց
նախարար կ'ըլլէ. «Պատրաստ եմ հրաժարելու երե-
սուն հինգ հապար ընտրողներու արժանապա-
տուութիւնը պահպանելու սիրտին»:

Ըստ «Մուսաբապայ»ի, վարչապետ Հարիբի
ըսած է, թէ ոչ մէկ տրամադրութիւն կայ Մեթոի
ընտրութեան արդիւնքներուն վերանայելու:

Միւս կողմէ, «Քիֆախ Արապի» իր առաջին էջով
հետեւեալը կը նշէր. «Նախարարաց խորհուրդը յա-
ջողեցաւ Լիբնանը մալքութիւնը պակասումէն
փրկելու որոշումը տալ, բայց ձախողեցաւ քաղա-
քական մթնոլորտի ապակասումը փարատելուն
մէջ: Նախագահ Լախուտ յայտարարեց. պետու-
թիւնը ոչ մէկ անտէ կ'ենթարկուի սպանալիքնե-
րու եւ համայնքային զրգոտութիւններու»:

«Պայրաբ»ի գլխաւոր խորագիրներուն կարգին
էին. «Նախագահ Լախուտ նախարարներուն ըսաւ.
ընտրութեան հարցով ինծի բոլոր դիմողներուն
յատակացուցի, թէ կողմնակի ոչ մէկ դասաւորման
համաձայն եմ. պատրիարք Սֆէյրի, Պըրիի եւ Հա-
րիբի յայտնեցի, որ միայն օրէնքի գործադրու-
թիւնը կրնամ ընդունիլ, իսկ Ապու ժառուտէ եւ Պա-
րա եպիսկոպոսներուն ըսի, թէ պետութիւնը սպա-
նալիքներով մտահոգ չէ եւ ի հարկին կրնայ որեւէ
խոտվութիւն գապել» եւ «Միշէլ Մըր, Սեպուի Յով-
նանեան եւ Էմիլ Էմիլ Լախուտ միացեալ հաղոր-
դագրութեամբ մը յայտարարեցին. - Նեսիպ Լախու-
տի յայտարարութիւնը դատաւոր Ապու Նախիֆի
խօսքերուն մասին իրականութեան չի համապա-
տասխանեք» յուրերը:

«Անուար» օրաթերթը կը գրէր. «Ըլիաս Մըրի բա-
ցակայութիւնը նախարարաց խորհուրդի նիստէն
կը հաստատէ անոր խոր տարակարծութիւնները
Հարիբի հետ: Երեսփոխան Ղասսան Աշքար
յայտարարեց. - Տանս վրայ նետուած ռումբը հա-
մայնքային զրգոտութիւններ հրախրելու արարք
է»:

Գլխաւոր լուրերու կարգին, լիբնանեան օր-
թերթերը լուսարձակի տակ առած էին Իսրայէլի հա-
կադարձութիւնը՝ Հայֆայի գործողութեան: Ըստ
անոնց, իսրայէլեան բանակը ուժեղացնելով Արա-
ֆաթի կեդրոնատեղին, քանի որ ժամուան համար
գրաւած է պայման, որ շատ մեծ վնասներու ենթար-
կուած է եւ իսրայէլեան ուժեղացումները հասած
են մինչեւ Արաֆաթի նշջանեակը:

Թերթերը նաեւ այս մասին կը գրէին, թէ Շիմուն
Փերես Հայֆայի անձնասպանական գործողութեան
պատասխանատու Սուրիան նկատեց:

«Ուաշինթընը» դէմ կը դնէ Արաֆաթի արտաքս-
ման եւ ապարդիւն կը նկատէ Ռամալլայի գրաւու-
մը, կը գրէ «Նախար»:

Շրջանային հարցերուն եւ իրադարձութիւննե-
րուն անդրադառնալով՝ թերթերը կ'ակնարկեն
Սուրիոյ հիւսիսը՝ Չէյլուսի ամբարտակի փլույ-
ման, որ անտուն ձգեց շուրջ 25 հազար գիղացի-
ներ: Նախագահ Ասատ յայտարարած է, թէ հաշիւ
պիտի պահանջէ պատասխանատուներէն, այս
ահաւոր արկածին համար, միւս կողմէ պանսպան
երկիրներէն օգնութիւններ կը հասնին Սուրիա:

Լիբնանեան թերթերը նաեւ կը գրէին, թէ
Ֆրանսայի երեսփոխանական ընտրութիւններու
երկու հիմնական մտահոգութիւնները կարեւորու-
թիւն կը ստանան՝ Լը Փենի ուրուականը եւ աչ ու
ձախ գոյակցութեան կրկնութեան խոսափումը:

Ներքին էջերով թերթերը լուսարձակի տակ կ'առ-
նէին մալքութիւնը բանող ինքնաշարժներու պարա-
զան, մալքութի գործածութիւնը արգիլելու հարցե-
րը եւ այս որոշումին առաւելութիւններն ու ծաւա-
կան կողմերը:

«Անուար» օրաթերթը հարցապարոյց մը ունեցած
է հայկական «Գոհար» նուագախումբի գեղարուես-
տական ղեկավար Սեպուի Արգարեանի հետ: Վեր-
ջինը ըսած է, թէ խումբը կը բաղկանայ 55 նուագո-
ղէ եւ 75 երգիչներէ: Թերթը նշած է, թէ նուագա-
խումբը 7, 8, 9 Յունիսին Էլոյթճեր պիտի ունենայ
«Պիէլի» մէջ:

ՄԵԹՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆԸ ՇՓՈՒԹԻ ՄԱՏՆՈՒԹԵԱՒ

ՎՐԵՒ ՊԵՏՐՈՍ ՀԱՐՊ.
Երեսփոխան Պետրոս
Հարպ ղիտէլ տուաւ, որ
Մեթոի մասնակի ընտ-
րութիւնները նուիրա-
գործեցին չափաւորակա-
նութիւնը եւ ընդդիմու-
թեան յաղթանակը իշխա-
նութեան ընթացքին
վրայ:
Ան մաղթեց, որ ընդդի-
մութեան յաղթանակը
պարագայական չ'ըլլար,
այլ մնայուն հիմք կ'ու-
նենայ:
Իշխանութիւնը շփոթի
մատնուեցաւ եւ անոր
պատճառով քիչ մնաց, որ
լիբնանցիք կորսնցնեն
ժողովրդավարութեան
հաճութիւնը, եւ իշխանու-
թեան վերաբերմունքին
մէջ ակնյայտ շփոթը կը
շարունակուի մինչեւ օրս,
ըսաւ ան:

Հարպ կը ուղղեց իշխա-
նութեան դատական եւ քա-
ղաքական կառույցներու մի-
ջոցով պաշտօնապէս յայ-
տարարելու յաղթանակը,
առիթ տալու, որ դժգոհները
անոնց դէմ բողոք ներկա-
յացնեն դատական մար-
միններուն:

Ընտրական ճակատա-
մարտն եւ ընդդիմութեան
յաղթանակէն ետք, իշխա-
նութիւնն ու քաղաքական
ուժերը ի նպաստ պիտի վե-
րաբերին ընդդիմութեան
հետ. ճնշումի պիտի դի-
մեն, թէ այս յաղթանակը ժո-
ղովրդավարութեան նուիր-
ագործում պիտի նկատեն,
հարց տուաւ երեսփոխան
Հարպ:


ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԳՈՒԹԵԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՆ

Կազմակերպութեամբ՝
ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ՓՐԿԻՉ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Կիրակի, 9 Յունիս 2002, կէսօրէ ետք ժամը
6:00ին, Մեարոպեան վարժարանի բակին մէջ:
Պիտի պատարագէ եւ քարոյ՛
ԱՄԵՆ. ԵՒ ԳԵՐՋ.
ՏԵՐ ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
ՊԱՏՐԻԱՐԸ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ

Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի մասնաճիւղի սկաւո-
տական բոլոր խումբերը՝ Մայիսեան փառա-
տօնի տողանցքին առիթով, պարտին լման տա-
րագով ներկայ ըլլալ Սրգիէի ակումբը, Կի-
րակի, 9 Յունիս 2002, կէսօրէ ետք ժամը
3:00ին:
ԾԱՆՕԹ.- Տարագը ամբողջացնելու համար
նոյն օրը առաւօտեան ժամը 9:00էն 11:00
կարելի է հանդիպիլ Սրգիէի ակումբը:
Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱՃԻՐԻ
ՍԿԱՌԵՏ. ԽՈՐՀՈՐԴ
ԵՒ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ

365 ՕՐԵՐԵՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՑԻՆ
Սիրելիի մը յիշատակը յարգելու լաւագոյն ձեւը
հոգալով տարուամ 365 օրերէն օրուան մը Ծերանցի կետորուան ճաշի ծախսը՝ 300 ամբ. տուլար:
Սուիրատուներ կրնան դիմել ԶԱԼԻ տնօրէնութեան: Ծերանցի հեռ. քիւրթ՝ 260533, 266822 եւ 260534:



ԳՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ



ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

ԱՐՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԲՋԻՉԱՅԻՆ ՀԵՌԱՉԱՅՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Վերջին տարիներուն հրապարակ իջած բլիթային հեռաձայններուն մեծ մասը կ'ընդգրկէ նաև ելեկտրոնային խաղեր, ինչպէս՝ «Snake», «Space Impact» եւ այլն: Սակայն, մինչև վերջերս, բլիթային հեռաձայններ արտադրող ընկերութիւնները իրենց հեռաձայնները ելեկտրոնային խաղերով օժտելու ծրագրին նիւթական մեծ շահեր ապահովելու ակնկալութիւններ չունէին:

Արդարև, ցարկ բլիթային հեռաձայններու մէջ տեղադրուած խաղերը ձեւաւորման եւ արհեստագիտական իմաստով աւելի ետ են տասնամեակներ առաջ համակարգիչներու վրայ խաղցող ելեկտրոնային խաղերէն: Սակայն այս մէկը փոխելու ընթացքի մէջ է շնորհիւ «BREW» անունով դրութեան մը, որուն միջոցով պիտի կատարւորուի բլիթային հեռաձայններու յատուկ ելեկտրոնային խաղերու պատրաստութիւնը: Աւելին՝ անհատներ իրենց բլիթային հեռաձայնին մէջ պիտի կարենան նորանոր խաղեր արձանագրել անթել հաղորդակցութեամբ:

Միացեալ Նահանգներու մէջ բլիթային հեռաձայններու եւ անթել հաղորդակցութիւններու ճարտարաւորուեստի նկատմամբ արդէն սկսած են որդեգրել դրութիւնը, ամսական 2 - 3 տոլարի փոխարէն իրենց յաճախորդներուն տալով առիթը «Snake»-ի փոխարէն «Gladiator» կամ «Tiger woods PGA Tour Golf» անունով նորաստեղծ խաղերը ըմբռնելու:

Նշենք, որ բլիթային հեռաձայններ ելեկտրոնային հետաքրքրական խաղերով օժտելու գաղափարը ամերիկեան մտայնացում մը է: Այս ճարտարաւորուեստին շնորհիւ 2001ին ամերիկեան ընկերութիւնները 827 միլիոն տոլարի մուտք մը ապահովեցին մինչ Միացեալ Նահանգներ բաւարարուեցան 20 միլիոն տոլարի մուտքով մը:

Միացեալ Նահանգներու ընկերութիւններուն համեմատաբար քիչ շահին պատճառներէն մէկը այն է, որ հափազանք ամերիկացիներու 50 առ հարիւրը միայն բլիթային հեռաձայն կը գործածէ մինչդեռ ճափոնցիներուն՝ 65 առ հարիւրը, իսկ թայուանցիներուն եւ հոնկոնկացիներուն 70 առ հարիւրը ունին իրենց անձնական բլիթային հեռաձայններ:

Սակայն, «Տաքսոնիքը» ընկերութեան գնահատումներուն համաձայն, մինչև 2006 բլիթային հեռաձայններու վրայ ելեկտրոնային խաղեր ըմբռնող ամերիկացիներուն թիւը պիտի քառապատկուի՝ հասնելով 124,6 միլիոնի:

«ՓԱԼՄ ԷՄ. 515» ԶԵՌՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

Երբ հրապարակ իջած «Փալմ էմ. 515» ձեռքի համակարգիչը, մասնագէտները ու թ ա ց ր ի ն դրուեստական արտայայտուած թիւները շաղկապելու: Սակայն սարքը օգտագործողները շուտով նկատեցին, որ այլապէս կատարելագործուած, այս սարքը ունի երկու հիմնական թերութիւններ՝ պատկերներու յստակութեան պակաս եւ անբաւարար RAM:



«Փալմ»-ի նորագոյն տարբերակը՝ «Փալմ էմ. 515» կու գայ սրբագրելու այս երկու թերութիւնները: Նշենք, որ սարքը, իր նախորդին նման, կ'ընձեռէ Ե-նամակները ուղարկելու, թղթածրարներ ամբարելու, հաշիւներ կատարելու եւ արձանագրելու կարելիութիւններ եւ այլն:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԴՐԱՆՏԱԿԱՅՐ ԱՅԱԿԵՐՏԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ԿԱՅՈՒՐՄԱՆ ԱՆՆԱՐԱՏՄԱՆ ԶՈՅՑ ԵՐԱՊՏՈՅՑՆԵՐ ԴԵՊՒ

ՍԵՒԱՆ ԵՒ ԱՐԶՆԻ
Ա. 9ԵՆ 29 ՅՈՒՆԻՍ. Բ. 9ԵՆ 30 ՕԳՈՍՏՈՍ 21 ՕՐ:
10 ՕՐ ՊՏՈՅՑՆԵՐ ՕՐԱԿԱՆ 4 ԱՍՏՈՒ ՈՒՏԵՂՈՎ, ԿԻՉԱՆ, ՏՈՒՐԵՐԵ, ՕՐԱԿԱՐԻ ՏՈՍՍԵ

Մինչև 12 տարեկան՝ 399 \$, 12-16 տարեկան՝ 495 \$, 16-18 տարեկան՝ 559 \$, 19-26 կեր 780 \$


Մեղման Կրթական Հաստատութեան ամպլեքի հանդիպման արտադրող ղեկավարը 1486 17 Յունիս: ՉԳՆ միայն 1998 թվական:

Ամէ օր առտու եւ իրիկուն մեր գրասենյակին առջեւ, շքեղ օրացարկերով ղեկավար, Դամասկոս եւ Լաթաքիա, 6 916 սկսեալ:

ԿԵՍԿԵ. ԱՇՃԱՆ ԹՈՒՐԶ
Հեռ. 01/261177, 01/240854 եւ 03/233978
Պրոքայնորէրէ՝ TRANSPORT & TOURISM SERVICES S. A. L.


www.hamazkayin.com

ԱՐԲԱՆԵԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ



Հաղորդակցելու պահանջը բնածին երեւոյթ է մարդ արարածին մօտ, եւ նախամարդէն մինչև մեր օրերէն արդի մարդը ամէն ճիգ ի գործ դրած է կարելի բոլոր միջոցներով ուրիշներու հետ կապ հաստատելու: Այս երեւոյթն է հաւանաբար, որ մղած է յոյն իմաստասէրը «մարդը ընկերային է» ըսելու, սակայն միայն «ընկերային» եզրով կարելի չէ բացատրել հաղորդակցութեան մարմալը մարդուն մօտ, որովհետեւ մարդը նաև վաճառական էակ է եւ երբեմն՝ աշխարհակալութեան ձգտող:

Գիտութեան եւ արհեստագիտութեան աննախընթաց վերելքը, գործապրեջաւ մարդկութիւնը անցնող դարուն,



հանրները գոհացնող նորանոր միջոցներ եւ կը զարգացնէ հեռաձայնային կապը, ապա՝ միջցամաքամասային հեռաձայնային հաղորդակցութիւնը եւ ձայնասփռումի ալլ դրութիւններ: Արբանեակային հաղորդակցութիւնը կը հանդիսանայ արհեստագիտական նուաճումներու ճորտ կարեւորագոյն անկիւնաքարը: Այս դրութեամբ տեղեկութիւններ կ'ուղարկուին երկրէն երկրագունդին շուրջ թաւաղող արբանեակի մը, որ իր ստացած «նշանները ընդլայնելով վերստին կ'ուղարկէ երկրագունդ» հաղորդակցութեան ալլ կեդրոն մը:

Հաղորդակցութեան արբանեակները սովորաբար ծիրի մէջ կը դրուին հրթիռներու միջոցով: Արբանեակի մը գործուկան ձեւէն դուրս կու գայ 19րդ դարուն եւ ամբողջ դար մը նորագոյն կը զարգանայ, սակայն մարդկային միտքը տակաւ կը փնտռէ հաղորդակցութեան իր պահանջները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԵՒ ԼՐԱՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԿԱՅԲԸ

Վերջերս հանրութեան տրամադրութեան տակ դրուած է ընդհանրապէս հայկական մամուլին եւ յատկապէս հայրենի մամուլին ԳՆԻՐՈՒՄԸ www.armenianews.com կայքը:

Հայերէն, ռուսերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով լրատուութիւն կատարող այս կայքը ունի մեծաշուք բաժնիներ, ուր օրակազմ կը տեղադրուին հայրենի շարք մը թերթերու գործառնները: Այս թերթերուն կարգին են՝ «Ազգ», «Առաւօտ», «Իրաւունք», «Հայկական ժամանակ», «Արմատ» եւ այլն: Կայքին ռուսերէնով լուրեր փոխանցող բաժինը եւս հարուստ է՝ «Գոյուն Արմենի», «Ռեսփոնսիվըս Արմենի», «Նովոյէ Վրեմիա», «Տէլեւոյ Էքսփրէս» եւ այլն:

Անգլերէնով եւ օրակազմ դրութեամբ կը ներկայացուին արգելափակման հրատարակութիւններ, «Ազգ»-ի յօդուածները, ինչպէս նաև՝ սփիւրքահայ լրատուական շարք մը աղբիւրներու լուրերը: Կայքը օժտուած է նաև փնտառութի դրութեամբ: Ան կ'ընդգրկէ նաև հարցախոյզի բաժին, որուն ներկայ հարցումը հետեւելի է. «Սփիւրք պէ՞տք է ներդրել կանգնի Ջաւախի հայութեան»: Կայքին մէջ լուրերը դասակարգուած են ըստ նիւթի: Կայքը օժտուած է նաև արխիւի բաժնով:

2002Ի ՄՈՆՏԻԱԼԻ ԳԼԽԱԻՈՐ ԿԱՅՔԵՐԸ




2002ի Մոնտիալը այս օրերուն համացանցին մէջ ամէնէն աւելի փնտռուած նիւթերէն մէկն է: Տրուած ըլլալով, որ Մոնտիալի մրցումները տեղի կ'ունենան Քորէայի եւ Ճափոնի մէջ, արեւմտեան կիսագունդին վրայ մրցումները կը խաչաձեւուին աշխատանքային ժամերու հետ: Հետեւաբար միլիոնաւոր ֆութպոլասէրներ հակադրուած են համացանցի միջոցով հետեւիլ մրցումներուն, եթէ անշուշտ չեն կրնար պատկերասփիւռ մը գետեղել իրենց գրասեղանին վրայ:

Ըստ մասնագէտներու նախատեսութիւններուն, Սեպտեմբեր 11ի դէպքերուն յաջողող համացանցի լրատուական կայքերը այցելուներու թիւին հետ մրցող թիւեր պիտի արձանագրուին Մոնտիալի ամբողջ ընթացքին: Համացանցի մարզական - լրատուական գլխաւոր կայքերը արդէն «կըսած են» բազմամիլիոն այցելուներու ճնշումին տակ: Բլիթային հեռաձայններու եւ անթել հաղորդակցութեան շարք մը ընկերութիւններ համացանցի անթել դրութիւններ օգտագործելով՝ վայրկեանը վայրկեանին Մոնտիալի նորութիւնները կը հաղորդեն իրենց բաժանորդներու բլիթային հեռաձայններուն:

Համացանցի <http://fifaworldcup.com> կայքին 20 տոլարի փոխարէն բաժանորդագրուելով, բազմա-հազար ֆութպոլասէրներ Մոնտիալի մրցումներուն կարեւորագոյն վայրկեաններուն կը հետեւին վիտեոյի դրութեամբ: «Ես հեռաձայն»-ի համագործակցութեամբ այս նախաձեռնութիւնը կրնայ ծառայել իրեն նախընթաց՝ յառաջիկայ մոնտիալներուն ամբողջ մրցումները համացանցով պատկերասփռելու:

Մոնտիալի մրցումներուն նորութիւններուն ձրի-օրէն հետեւիլ փափաքողները եւս կրնան գոհ մնալ այցելելով հետեւեալ կայքերը՝ www.bbc.co.uk/worldcup, www.teamtalk.com/worldcup2002, www.worldcuprivals.net, www.umbro.com/bunkoff

ՄՈՆՏԻԱԼԻ ԶՈՒԳԱՆԵՌՈՒ ՄՈՆՏԻԱԼԸ



2002ի Ճափոնի եւ Քորէայի Մոնտիալին կողքին, այս օրերուն տեղի կ'ունենայ մարդամեքենաներու 5րդ Մոնտիալը՝ «Ռոպոքափ»ը:

Մրազիրին գլխաւոր նպատակն է մինչև 2050 կազմել մարդամեքենաներու հաւաքական մը, որ պարտութեան պիտի մատնէ օրուան Մոնտիալի ախոյեանը:

Մարդամեքենաներու Մոնտիալին մասին յաւելալ տեղեկութիւններ ստանալու համար կարելի է այցելել «Ռոպոքափ»-ի պաշտօնական կայքը՝ www.robocup.org:

Պատրաստե՛ք իւզիկ ՍՈՒՐԱՏԵԱՆ

ՀԱՄԻԿ ԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՅՏԵՆ

HAMPIG SASSOUNIAN

CSP - L.A.C. B - 5 - 131 44750

60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

Մանկապատանեկան

ՅՈՒՆԻՍԸ ԵԿԱԻ, ՊԱՏՐԱՍՏԵՑԷՔ ԶԵՐ ՀՈՎԱՆՈՑՆԵՐԸ

... Աճշուշտ, ո՛չ Լիբանանի մէջ. բայց՝ Հնդկաստանի եւ անոր մերձակայ երկրներում մէջ: Ընդ Յունիս ամիսը իրեն հետ կը բերէ անձրևները եւ քիչ մը... ալ զովորին:



Մեր քով ամառը կը սկսի. ո՛չ հով, ո՛չ անձրև: Մենք արդէն կ'ուղղուինք դէպի ծով, կը մտածենք արձակուրդներու մասին... Սակայն նոյն ժամանակ աշխարհի այլ շրջաններու մէջ ճիշդ հակառակը կը պատահի: Օրինակի համար Հնդկաստանի մէջ Յունիս ամիսը հետը կը բերէ հեղեղային անձրևներ: Այս անձրևները

դիւնք՝ հեղեղային անձրևներ: Այս հեղեղը անդադար կը շարունակուի չորս ամիս:

ԿԱՐԵՒՈՐ ԵՐԵՒՈՅԹ ԾԸ

Ամրան վեցամսեայ հովը աշխարհի ամէնէն կարեւոր օդերեւութաբանական երեւոյթներէն մէկն է: Ան կը յառաջացնէ աղէտալի ողողումներ, ամբողջ գիւղեր կը մեկուսացնէ եւ ճամբաները անգործածելի կը դարձնէ: Սակայն հնդկները մեծ ուրախութեամբ կը դիմաւորեն այս եղանակը, որովհետեւ ամիսներու շրջաններէն ետք, վերջապէս ցանքը կը բուսնի այդ անձրևներուն շնորհիւ:




կը շարունակուին մինչեւ Սեպտեմբերի վերջը: Ինչո՞ւ այս հեղեղը: Այս շրջանին վրայ կը փչէ վեցամսեայ հով մը: Այս երեւոյթին պատճառը ծովուն եւ ցամաքին միջեւ գոյութիւն ունեցող ջերմաստիճանի մեծ տարբերութիւնն է:

